ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N 25/11/2022

ք. Երևան 25 նոյեմբերի 2022թ.

«Հայր և որդի Երեմյաններ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ «Կատարող»), ի դեմս գլխավոր տնօրեն Դավիթ Երեմյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, և մյուս կողմից «Առողջապահության նախարարությունը» (այսուհետ՝ «Պատվիրատու»), ի դեմս Վարդանուշ Գրիգորյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, միասին անվանվելով «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն Պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին մատուցել միանգամյա հանրային սննդի կազմակերպման ծառայություններ (այսուհետ՝ «Ծառայություններ»), իրեն պատկանող՝ ՀՀ, ք. Երևան, Ծիծեռնակաբերդի զբոսայգի 1 հասցեում գտնվող «Լիվինգսթոն» հանրային սննդի օբյեկտում, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել դրանց դիմաց:

1.2. Ծառայությունները մատուցվելու են Պատվիրատուի հետ բանավոր կամ գրավոր կարգով նախապես համաձայնեցված ճաշացանկով:

1.3. Ծառայությունները մատուցվելու են 2022 թվականի նոյեմբերի 26-ին, ժամը 17:00-ից 19:30-ն ընկած ժամանակահատվածում:

1.4 Ծառայությունները մատուցվելու են թվով 35 անձի համար 1.2 կետով սահմանված ճաշացանկով:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Կատարողը պարտավոր է՝

2.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով, ամբողջ ծավալով և Պայմանագրի 1.3 կետում սահմանված ժամկետի ընթացքում,

2.1.2 Ծառայությունները մատուցել տվյալ տեսակի ծառայությունների մատուցման համար սահմանված կանոնների պահպանմամբ՝ ըստ անհրաժեշտության համապատասխան փորձ ունեցող մասնագետների ներգրավմամբ,

2.1.3 Գաղտնի պահել Ծառայությունների մատուցման ընթացքում Պատվիրատուի և Պայմանագրով նախատեսված հաճախորդների վերաբերյալ իրեն հայտնի դարձած ցանկացած տեղեկություն,

2.1.4 Անհապաղ և անհատույց վերացնել Ծառայությունների մատուցման ընթացքում հայտնաբերված բոլոր թերությունները:

2.2. Կատարողն իրավունք ունի՝

2.2.1 Պատվիրատուից ստանալ ցանկացած տեղեկություն, որն անհրաժեշտ է Պայմանագրով նախատեսված իր պարտավորությունների կատարման համար,

2.2.2 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 3.3 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև Պայմանագրի 4.1 կետով նախատեսված տուգանքը:

2.3 Պատվիրատուն պարտավոր է՝

2.3.1 Ժամանակին վճարել սույն Պայմանագրի 3-րդ կետում նախատեսված գումարը,

2.3.2 Կատարողին ժամանակին տրամադրել ցանկացած տեղեկություն, որն անհրաժեշտ է Կատարողին իր պարտավորությունները կատարելու համար,

2.3.3 Գաղտնի պահել Ծառայությունների մատուցման ընթացքում Կատարողի և վերջինիս աշխատողների վերաբերյալ իրեն հայտնի դարձած ցանկացած տեղեկություն,

2.4. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.4.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը.

3. Պայմանագրի գինը և հաշվարկների կարգը

3.1. Սույն պայմանագրով Կատարողի կողմից մատուցվող Ծառայությունների գումարը կազմում է 2,090,520.0 (երկու միլիոն իննսուն հազար հինգ հարյուր քսան) ՀՀ դրամ՝ նեռարյալ կիրառելի բոլոր հարկերը և պարտադիր վճարները:

3.2 Պայմանագրով սահմանված գումարը Պատվիրատուն վճարում է 3.4 կետի պահանջների կատարումից հետո հետո՝ 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում:

3.3. Սույն Պայմանագրի 3.1 կետով նախատեսված գումարը ենթակա է վճարման՝ Կատարողի կողմից տրամադրվող բանկային հաշվին փոխանցման եղանակով՝ սույն Պայմանագրով սահմանված կարգով:

3.4 Ծառայությունները մատուցված են համարվում Ծառայությունների մատուցման վերաբերյալ կազմված հանձնման-ընդունման արձանագրության (Հավելված 1) երկկողմանի

ստորագրումից հետո, որը ստորագրվում է Ծառայությունների փաստացի կատարման օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Սույն Պայմանագրի 1.3 կետում նշված Ծառայությունների մատուցման ժամկետների կամ 3.3 կետում նշված վճարման ժամկետների խախտման համար խախտող Կողմը մյուս Կողմին վճարում է տուգանք՝ Պայմանագրի արժեքի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

4.2. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.3 Տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պատասխանատվությունից:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել Պայմանագիրը՝այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

6. Վեճերի լուծման կարգը

Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և ուժի մեջ է մինչև Կողմերի կողմից պարտավորությունների կատարումը լրիվ ծավալով:

7.2. Սույն Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Կողմերի կողմից:

7.3. Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Առողջապահության նախարարություն»	«Հայր և որդի Երեմյաններ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն N3	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Եր.Քոչարի 27, բն. 25
ՀՎՀՀ՝ 02507171	ՀՎՀՀ՝ 01557735
ՀՀ ՖՆ գանձապետական հաշվեհամար՝	«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 900011041218	Հ/Հ 217003224698912
Գլխավոր քարտուղար՝ Վարդանուշ Գրիգորյան	Գլխավոր տնօրեն՝ Դավիթ Երեմյան
L.S.	L.S.